ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՄԵԿՕՐՅԱ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

19.01.2018 18:34

Լոռու մարզի փաստաբաններս միանալով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով սահմանված՝ դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանքի կիրառում նախատեսող իրավակարգավորման վերաբերյալ մեր գործընկերների կողմից տարածված հայտարարությանը, տեղեկացնում ենք, որ որպես նախազգուշական քայլ, մեկօրյա բողոքի ակցիա ենք իրականացնելու՝ այդ օրը հրաժարվելով Լոռու մարզում պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց: Մեր վստահորդների ներողությունն ենք հայցում, եթե 1 օրով ստիպված են լինելու զգալ մեր բացակայությունը, հավաստիացնելով, որ այս պայքարն ի վերջո իրենց արդար դատաքննության իրավունքին է վերաբերում, քանի որ ճնշված փաստաբանը չի կարող արդյունավետ պաշտպանություն ապահովել: Բողոքի ակցիան տեղի կունենա 2018 թվականի հունվարի 22-ին: Լոռու մարզի փաստաբաններ:

Բեռնել բողոքի ակցիային մասնակցող Լոռու մարզի փաստաբանների ցուցակը

Առաջարկվող նորություններ

17.01.2018ԲԱՋՄԱԹԻՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՊԱՀԱՆՋ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

18.01.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀՂԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

18.01.2018
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 907 ՓԱՍՏԱԲԱՆ

19.01.2018
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 1110 ՓԱՍՏԱԲԱՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })